ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 սեպտեմբեր, 2020 թվականի № 36-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2010 թվականի սեպտեմբերի 6-ի № 50-Լ որոշմամբ հաստատված կարգի 2.1 և 2.3 կետերը և հաշվի առնելով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործադիր տնօրենի թափուր պաշտոնի առկայությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Ընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համալրման համար հայտարարել մրցույթ:
2. Ընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համալրման համար ստեղծել մրցույթի կազմակերպման և անցկացման ժամանակավոր հանձնաժողով և հաստատել դրա անհատական հետևյալ կազմը՝

- ԱՐԱ ՇԻՐԻՆՅԱՆ՝ Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահ (հանձնաժողովի նախագահ)
- ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահ
- ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ՝ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ
- ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար
- ՆՈՒՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ՝ «Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի» գործադիր տնօրեն (հանձնաժողովի քարտուղար)

3. Ընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնին ներկայացվող պահանջները և մրցույթին մասնակցելու համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը սահմանված են սույն որոշման հավելված 1-ով:

4. Հաստատել Ընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համալրման համար հայտարարության ձևը համաձայն սույն որոշման հավելված 1-ի և այն սույն որոշման ընդունմանը հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել Ընկերության կողմից հեռարձակվող «Առաջին ալիք» տեսալսողական ծրագրով, Ընկերության և Հանրային հեռարձակողի խորհրդի պաշտոնական ինտերնետային կայքէջերում:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

7 սեպտեմբեր, 2020 թվականի

ք. Երևան

Հավելված N 1
ՀՀ Հանրային հեռարձակողի խորհրդի
2020 թվականի սեպտեմբերի 7-ի N 36-L որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ
ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ
ՊԱՇՏՈՆԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանրային հեռարձակողի խորհուրդը հայտարարում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համալրման համար մրցույթ:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

- բարձրագույն կրթություն (գերադասելի է նաև մեդիայի և/կամ լրագրության ոլորտի մասնագիտական վերապատրաստման դասընթացների մասնակցություն վերջին 10 տարում).
- առնվազն 5 տարվա աշխատանքի փորձ հեռուստատեսային արտադրության կազմակերպման և իրականացման ոլորտում.
- ֆինանսատնտեսական գործունեության պլանավորման և կառավարման հմտություններ.
- մեդիային վերաբերող ՀՀ օրենսդրության և իրավական ակտերի իմացություն.
- պետական կառույցների, միջազգային կազմակերպությունների և հանրության հետ հաղորդակցության, բանակցություններ վարելու, հրատապ և պատասխանատու որոշումներ ընդունելու ունակություններ.
- հայոց լեզվի գերազանց, անգլերենի և ռուսերենի բավարար իմացություն:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ա) ուղեկցող (մոտիվացիոն) նամակ - (1 էջ).
բ) Հանրային հեռուստաընկերության զարգացման ծրագիր (հիմնադրույթներ) - (մինչև 5 էջ).
գ) ինքնակենսագրություն (մանրամասն).
դ) անձնագրի կամ նույնականացման քարտի պատճեն.
ե) բարձրագույն կրթությունը (հաղորդակցության, մեդիայի և/կամ լրագրության ոլորտի մասնագիտական վերապատրաստումը) հավաստող փաստաթղթերի պատճեններ.
զ) մասնագիտական գիտելիքներն ու գործնական հմտությունները հավաստող այլ փաստաթղթեր (հրապարակումներ, ինտերնետային աղբյուրների հղումներ, տեսալսողական կրիչներ).
է) երկու գունավոր լուսանկար՝ 3x4 չափսի:

ԺԱՄԿԵՏՆԵՐ

Փաստաթղթերը մրցույթի կազմակերպման և անցկացման հանձնաժողովի քարտուղարին են ներկայացվում մրցույթի անցկացման մասին զանգվածային լրատվության միջոցներով հայտարարման օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում (մինչև սեպտեմբերի 18-ը ներառյալ) ժամը 11:00-ից մինչև 17:00 (բացառությամբ շաբաթ և կիրակի օրերի), Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեով (հեռ. 010-57-85-02): Նշված ժամկետից հետո ներկայացված փաստաթղթերը չեն ընդունվում:
Մրցույթի կազմակերպման և անցկացման ժամանակավոր հանձնաժողովը փաստաթղթերն ընդունելու վերջին օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է մրցույթի մասնակիցների վերաբերյալ փաստաթղթերը և որոշում է ընդունում մրցույթում հաղթող ճանաչելու մասին: Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովը կարող է մրցույթի մասնակիցների հետ անցկացնել հարցազրույց:
Հաշվի առնելով մրցույթի մասնակիցների հնարավոր մեծ թիվը՝ մրցույթի մասնակիցների փաստաթղթերի ուսումնասիրման և մրցույթում հաղթող ճանաչելու մասին որոշման ընդունման ժամկետը կարող է երկարացվել մինչև քսան աշխատանքային օրով: